

ՔՆՆԵՐԻ ԱՏՈՒԹՅՈՒՆ ԵԽ ՄԱՑԵՆԸՆՍՊԱԿԹԻՒՆ

М. А. Мирополес, „О положении русских инородцевъ“, С. Петербургъ
1901 г., цѣла 2 рѣб.

Քննել երևոյթները առանց կանխակալ կարծիքների, առանց գովարինեօրական կուրութեան, առանց ճոճուան ֆրազ-ների, այլ հաւատարիմ մնալով ճիշտ ֆակտերին և առողջ լոգիկա-յին—դա մի յատկութիւն է, որից զուրկ են մանաւանդ արևել-ցի գրողները և նրանք, որոնք ամեն ինչ որոշ մոլային տե-սութիւնների ակնոցներով են դիտում, այդ կերպ բռնաբարելով բազմակողմանի և ազատ բացատրութիւն սիրող ճշմարտու-թիւնը:

Ամենալաւ ապացոյցն է մեր ասածների՝ իսլամի մասին գրականութիւնը. ոչ միայն ամեն բան կեղծող թունդ իսլամա-կաններն են աշխատում վերագրել մահմեդականութեան և զու-րանին բաներ որ գրանց էութեան հակառակ է, այլ նոյնը պա-տրաստ են անել զանազան դոկտրինեօրներ, որոնք բնաւ ծանօթ չկինելով առարկայի հետ, լոկ իրանց սերտած «տեսութիւննե-րի» հիման վրայ, վճիռներ և եզրակացութիւններ են անում, գրչի մի հարուածով ջախջախելով Մենախին էլ, Միւլլերին էլ... Ով ուզում է թող այդպէս թեթևաբար վերաբերուի իսլամի էու-թեան քննադատութեան, բայց մենք, հայերս, որոնց վիճակուած է խառն ապրել մահմեդականների հետ, պէտք է առանց կեղծ ազա-տամութիւնների աշխատենք ճանաչել իսլամը այնպէս, ինչ-պէս նա կայ: Կրակի յատկութեան պէտք է տեղեալ լինել նրանից չմնասուելու համար. կրակը իր յատկութիւնները չի փոխում անգէտ մանուկի դիմաց, ինչպէս և ամեն մի տարերա-լին զօրութիւն. իսկ իսլամը իր էութեամբ մի տարերային կործա-նիչ ոյժէ, ուստի պէտք է նրան ճանաչել—նրա աղէտաբեր գոր-ծունչութեան առաջն առնելու համար: Միրոպիեվի գիրքը այդ կողմից մի նշանաւոր գրուածք է, որի մէջ մեծ հմտութեամբ և

գիտնականորէն բացատրած է իսլամի էութիւնը, ինչպէս և ու համիսլամական շարժման նպատակները Ռուսաստանում:

L. U.

Կլարա Ցեսիկին—Ենինը եւ նրա տեսառկան դրութիւնը՝ թարգմ. ռուս-սերէնից Յարութիւն Նսայեան. Թիֆլիս 1905. գ. 15 կ.

Կլարա Ցեսիկինի գրքոյկը կանանց հարցի վերաբերեալ լաւագոյն հեղինակութիւններից մէջն է:

Յարգելի հեղինակուհին լուսաբանում է կանանց հարցը տնտեսական մատերիալզմի տեսակէտից, բայց այնպիսի եղանակացութիւնների է գալիս, որոնց համաձայն կը լինեն նաև այն անձինք, որոնք սխալ են համարում այդ փիլիսոփայական տեսութիւնը:

Այդ փոքրիկ գրքոյկում այնքան առողջ դատողութիւն կայ, տրամաբանութեան այնպիսի ոյժ, միաքը ամփոփ և պարզ արտայայտելու այնպիսի ձիրք, որ կարելի է հազուազիւտ համարել:

Դժբաղդաբար հայերէն թարգմանութիւնը, որ արած է ուսուերէն թարգմանութիւնից, շատ անաջող է:

Մի գիրք լաւ թարգմանելու համար պէտք է հասկանալ այդ գրքում գրուածը, իսկ պ. Նսայեան չի հասկացել իր թարգմանածը՝ մասամբ ուսուերէն լաւ չիմանալու, մասամբ էլ քաղաքատնտեսութեան մասին գաղափար չունենալու պատճառութիւնը:

Պ. Նսայեանի բոլոր սխալները յիշելու համար պէտք կը լինէր այստեղ արտատպել գրեթէ ամբողջ գրքոյկը, ուստի մենք ընտրում ենք մի քանի երեսներ և այդ երեսների մէջ միմնայն խոշոր սխալներ:

Թարգմանութեան 10-րդ երեսում:

Работа женщины перестала носить характеръ дѣятельности, сохраниющей блага, а направилась къ ихъ добыванію, թարգմ.—Կոնդ աշխատանքը դադարեց ընտանիքի փառքը պահպանող գործունէութեան բնաւորութիւն կրելուց:

Правовые нормы и идеи не успѣвали примѣниться къ новымъ явленіямъ экономической жизни—իրաւասնական կանոններն ու գաղափարները գործադրուելու միջոցներ չէին գտնում տնտեսական կեանքի նոր պայմանների մէջ:

14-րդ երես՝ женскій вопросъ разрѣшится только съ об-